Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ

ԻՐԱՆԻ XIX ԴԱՐԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ. Իրանի տնտեսական և սոցիալական վիճակի ուսումնասիրման համար այդ շրջանի իրանական պատմագրությունը շատ քիչ նյութ է տալիս։ Նասր-էդ-դին շահի թագավորության շրջանից մնացել են մի քանի հեղինակների՝ Միրզա Թաղի Սեփեհր Քաշանի[1], Մոհամմեդ Հասան խան Սանի-էդ-Դոլեի, Ռեզա Ղոլի խան Հեդայաթի, Միրզա Ջաֆար խան Հաղայեղ Նեգարի, Միրզա Իբրահիմ խան Աշթիանիի և ուրիշների պաշտոնական հաղորդումները, որոնք միայն քաղաքական իրադարձությունների նկարագրություններ են, երկրի սոցիալական վիճակի մասին չափազանց աղքատիկ տեղեկություններ են հաղորդում և այդ տեսակետից էլ մեծ արժեք չեն ներկայացնում։ Բացառություն է միայն Սանի-էդ-Դոլեի գրքի երրորդ հատորը[2], որը հավաստի փաստեր է պարունակում Մաշհադի, Սաբզևարի, Սեմնանի, Խարի շրջանի բազմաթիվ գյուղերի խալիսե հողերի, հողի վարձակալման եղանակների, ռենտայի և այլ հարցերի վերաբերյալ։ Դրանցից կարելի է նշել նաև ավելի վաղ գրված (1816), Մատենադարանում պահպանվող անհայտ հեղինակի մի գիրք[3], որը նույնպես հետաքրքիր նյու-

---

[1] میرزا تقی خان سپهر کاشانی ملقب بلسان‌الملك ناسخ التواریخ محمد حسن خان صنیع الدوله منتظم ناصری مراة البلدان ناصری الماثر و الآثار رضاقلی خای هدایت روضة الصفای ناصری، میرزا جعفرخان حقایق‌نگار حقایق الاخبار ناصری حاج میرزا ابراهیم خان اشتیانی صدیق‌الممالك و منتخب التواریخ مظفری.

[2] جلد سیم کتاب مطلع الشمس، تالیف جناب صنیع الدوله محمد حسن‌خان، وزیر انطباعات و دارالترجمه خاصه همایونی ۱۳۰۳ هجری.

[3] کتاب عقاید بتاریخ ۱۳۳۲ هجری.

թեր է պարունակում XIX դ. սկզբի Իրանում կիրառվող ռենտայի և հարկերի չափերի մասին։

XIX դ. վերջերին պետական եկամուտների, գյուղացիներից գանձվող հարկերի և տուրքերի վերաբերյալ արժեքավոր նյութեր է հաղորդում Էթեմադ-էս-Սալթանեն՝, որը գիտակ է եղել Իրանում տիրող դրությանը։

Այդպիսի աղբյուրների շարքին կարելի է դասել նաև արքայազն Զել-էս-Սոլթանի[5] և Նասր-էդ-դին շահի[6] օրագրերը։ Նասր-էդ-դին շահի Խորասան և Մազանդարան կատարած ճամփորդության ժամանակ կազմվել են օրագրեր, որոնք երկրի տարբեր նահանգների հողատիրության ձևերի մասին որոշ փաստեր են հաղորդում։

Բավականին հետաքրքիր նյութեր կան նաև Անսարիի «Իսֆահանի և Ռեյի պատմությունը»[7] գրքում։ Հատկապես հողային սեփականության մասին հեղինակի բերած նյութերը արժեքավոր են։

Վակֆային հողերի և հարկային սիստեմի վերաբերյալ նյութերի կարելի է հանդիպել նաև, այսպես կոչված, «Իրանի բարեփոխումները»[8] գրքում։

XIXդ. և XX դ. սկզբներին իրանական պատմագրությունը համարյա չէր զբաղվում երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության լուսաբանումով։ Միայն XX դ., հատկապես II համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում, մի շարք պարսիկ հեղինակներ, ուսումնասիրելով Իրանի ներքին կյանքի հետ կապված տարբեր հարցեր, տվել են նաև բավական արժեքավոր փաստական նյութ, որը բացահայտում է XIX դ. Իրանի, հատկապես նրա երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական վիճակը ընդհանրապես, և ագրարային հարաբերությունները՝ մասնավորապես։ Վերջին ժամանակներս լույս տեսած աշխատությունները, չնայած նրանց մակերեսայնության, լուսաբանում են ագրարային հարաբերությունների բազմաթիվ հարցեր և օգտակար են այդ հարաբերությունների ավելի խոր և բազմակողմանի ուսումնասիրման համար։

---

4 محمد حسن‌خان اعتمادالسلطنه کتاب الماثر و الاثار، تهران

5 تاریخ سرگذشت مسعودی، اصفهان ۱۳۲۵

6 سفرنامه ناصرالدین شاه بخراسان ۱۳۰۶

7 انصاری میرزا حسن خان، تاریخ اصفهان و ری، اصفهان ۱۳۲۲

8 کتابچه تنظیمات حسنه دولت علیه و ممالك محروسه ایران ۱۲۹۲

Մի քանի պարսիկ հեղինակներ փորձել են բացահայտել իրանական հասարակության մեջ եղած հակասությունները՝ մինչև իսկ նրա դասակարգային կառուցվածքը։ Այսպես, Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Բինայի աշխատության մեջ շոշափվում են հարցեր, որոնք նախկինում բացարձակապես անտեսվում էին իրանական պատմագրության մեջ։

Ալի Աքբար Բինան 1958 թ. հրատարակած «Իրանի քաղաքական և դիվանագիտական պատմությունը» աշխատության[9] առաջին գլուխը անվանել է «Մի հայացք Իրանի աշխարհագրության, ժողովրդի, դասակարգերի և պետական հիմնարկների վրա՝ XIX դարի սկզբներին»։

Հեղինակը նկատում է, որ այդ ժամանակ եղել են մի շարք հակասություններ Իրանի ներքին անբերրի շրջանների բնակչության դժվար, տանջալից կյանքի և տափաստանների ու լեռնային լավ կլիմայով, տեղումներով շրջանների բնակչության համեմատարար ապահով կյանքի միջև, հակասություն մի քանի զորեղ և ազդեցիկ պետերի ու ժողովրդական մասսաների ողբալի վիճակի միջև, հակասություն վաչկատուն ցեղերի, որոնք հանուն արոտավայրերի անընդհատ շարժման մեջ էին, և երկրագործությամբ զբաղվող բնակչության կյանքի միջև և այլն։

Սակայն, ինչպես երևում է, չնայած հեղինակը չի ժխտում շահագործող դասակարգերի առկայությունը և գյուղացիական հոծ մասսաների կողոպուտը նրանց կողմից, նա անմիջապես իր պաշտպանության տակ է վերցնում կալվածատերերին և հողի մասնավոր սեփականատերերին։ Ըստ նրա տված տեղեկության, գյուղացուց երկու տեսակի հարկ էր վերցվում՝ մեկը պետության բաժնի անվան տակ, իսկ մյուսը որպես արբաբի բաժին. կալվածատերը չէր կարող արբաբի բաժինը ավելացնել իր ցանկությամբ, քանի որ կալվածքի ավերումով կվերանար նաև կալվածատիրոջ բաժինը։ Նա նշում է, որ «Հարկային պաշտոնյաների անչափ ու անսահման պահանջների դեմ, իրականում կալվածատերը գյուղացու պաշտպանն էր համարվում»։

Իրանում գոյություն ունեցող ագրարային հարաբերությունների ջատագովի դերում հանդես են գալիս նաև պարսիկ այլ հեղինակներ։ Այդ տեսակետից բնորոշ է Աբդուլլահ Մոսթոֆին, որը Ղաջարների օրոք պետական պաշտոնյա լինելով, մոտիկից ծանոթ է եղել երկրի վարչական կառուցվածքին, հարկային սիստեմին,

---

[9] علی‌اکبر بینا، تاریخ سیاسی و دیپلوماسی ایران، جلد اول، تهران، ۱۹۵۸

հողատիրության ձևերին և այլն։ Իր հուշերում, որը նա վերնագրել է «Իմ կենսագրությունը կամ Ղաջարների շրջանի հասարակական և վարչական պատմությունը»[10], հողի վարձակալման եղանակների մասին խոսելիս տալիս է այնպիսի մեկնաբանություն, որը երևան է բերում այդ հարցի դնահատումը և բնութագրումը, Իրանի իշխող խավերի գաղափարախոսների կողմից։ Մոսթոֆին գրում է, որ XX դ. սկզբներին նա հանդիպում է մի եվրոպացու, որը աշխարհագրության միջազգային ընկերության անդամ էր և «...իր մասքեբից երևում էր, որ ազատամիտներից, կամ ինչպես ռուսներն են ասում կարմիրներից էր...»։ Նա հարցնում է Մոսթոֆուն, արդյոք Իրանում գյուղացիներին հող տալու հարց կարո՞ղ է ծագել. Մոսթոֆին բացասական պատասխան է տալիս։ Այդ մարդը զարմանքով հարցնում է պատճառը. Մոսթոֆին պատասխանում է, որ Իրանի գյուղացին եվրոպական գյուղացու պես վարձկան չէ, այլ նա կալվածատիրոջ մասնակից ընկերն է (sic)։ Նա այնուհետև մատնանշում է գյուղատնտեսության հինգ տարրերը՝ հողը, ջուրը, բանող անասունը, սերմացուն և աշխատուժը, և ավելացնում, որ կալվածատերերից ու գյուղացիներից ով ինչ տրամադրի այդ հինգ տարրերից, դրա դիմաց էլ կստանա բերքի համապատասխան մեկ հինգերորդ մասը։ Իհարկե, այդ գործում դեր է խաղում նաև առաջարկն ու պահանջը։ Եթե հողը բերրի չէ և ավելի շատ աշխատանք է պահանջում, ապա գյուղացիները դժվարությամբ կհամաձայնվեն մշակել այդպիսի հողը, և այդ դեպքում կալվածատերը ստիպված է ավելի մեծ բաժին հատկացնել գյուղացուն։ Եվ հակառակը, բերրի հողերում, հատկապես այն վայրերում, ուր բնակչությունը խիտ է ու աշխատող ձեռքերը շատ, կալվածատերը ավելի մեծ բաժին է հատկացնում իրեն։ Բայց Մոսթոֆին ավելացնում է, որ այդ տարբերությունը ընդհանրապես մեծ չէ։

Ինչպես տեսնում ենք, սա մի փորձ է արդարացնելու հողային հարաբերությունների այն վիճակը, որը տիրում էր Իրանում մինչև վերջերս։ Այս տեսակետը կրկնել են նաև պարսիկ այլ հեղինակներ ու քաղաքական գործիչներ։ Նրանք փորձել են այնպես մեկնաբանել, որ իբր Իրանում կիրառվող հողի վարձակալման եղանակները փաստորեն ոչ թե շահագործողական էին, այլ փոխադարձ համաձայնության և մասնակցության արդյունք։ Գյուղացին ոչ թե շահագործվում է կալվածատիրոջ կողմից, այլ նա իր հոժար կամքով

---

[10] عبدالله مستوفی، شرح زندگانی من یا تاریخ اجتماعی و اداری دوره قاجاریه، تهران ۱۹۴۵

մասնակցում է հողագործությանը և ստանում իր համապատասխան բաժինը։ Ակնհայտ է, որ այդ տեսակետը նպատակ ունի պաշտպանել շահագործող դասակարգերի շահերը և բթացնել գյուղացիության ինքնագիտակցությունը։

Պարսիկ հեղինակներին հետաքրքրել է նաև խալիսե կամ պետական հողատիրության հարցը, քանի որ այն որոշակի նշանակություն է ունեցել պետական եկամուտների տեսակետից։ Բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել այդ հարցին, սակայն հատկապես ուշադրության է արժանի Թաղի Բահրամիի գիրքը «Իրանի գյուղատնտեսության պատմությունը»[11] վերնագրով, որը հրատարակվել է 1951 թ. և փաստորեն պարսկերեն լեզվով առաջին աշխատությունն է՝ նվիրված Իրանի գյուղատնտեսության և ագրարային հարաբերությունների պատմությանը։ Տալով Իրանի գյուղատնտեսության համառոտ պատմությունը վաղ ժամանակներից սկսած, հեղինակը ընդարձակ բաժին է հատկացնում նաև XIX դ.։ Հատկապես խալիսե պետական հողերի մասին նա բերում է բազմաթիվ տեղեկություններ, ցույց տալով հողատիրության այս ձևի էվոլյուցիան։ Նա կանգ է առնում խալիսեների վաճառքի պատմության վրա և ընդգծում դրա անհրաժեշտությունը։ Սակայն նա նշում է, որ իբր այդ հողերը վաճառվում էին ռայաթներին, մինչդեռ հայտնի է, որ քայքայված գյուղացին ոչ մի միջոց չուներ որևէ հողամաս գնելու։ Հեղինակն անդրադառնում է նաև մի շատ կարևոր, գյուղացիների՝ հողին ամրացած լինելու հարցին։ Ճիշտ է, նա նշում է, որ XIX դ. վերջերին գյուղացիները այնքան էին կախված հողատերերից, որ չէին կարող հեռանալ հողից առանց նրանց թույլտվության, սակայն ընդգծում է, որ իբր Նասր-էդ-դին շահը ազատեց նրանց այդ կապանքներից և նրանք կարող էին գնալ ցանկացած վայրը և ծառայել ցանկացած հողատերերին։

Պարսիկ հեղինակներն իրենց ուսումնասիրման առարկա են դարձրել հատկապես երկրի հարկային սիստեմը։ Հարկերի կարգավորումը և պետական եկամուտների գլխավոր աղբյուրը հանդիսացող այդ գործում թույլ տրվող ահռելի չափերի հասնող խախտումները ինչ-որ ձևով կանխելու համար անհրաժեշտ էր հարկային ամբողջ սիստեմի, այդ թվում և հողային հարկի ուսումնասիրումը։ Որպես օրինակ կարելի է նշել Մորթեզա Հուսեյնի Թեհրանիի «Հարկային գիտության սկզբունքները և Իրանի ֆինանսական օրենքները» գիրքը[12]։ Թեհրանին ընդգծում է, որ հողային հար-

---

11 تقی بهرامی، تاریخ کشاورزی ایران، تهران ۱۳۳۰

12 مرتضی حسینی تهرانی، اصول علم مالیه و قوانین مالی ایران، تهران ۱۹۵۵

կերը մասնավոր սեփականատիրական՝ արբաբի կալվածքներում և պետությանն ու շահին պատկանող հողերում տարբեր էին։ Ըստ կարդի, հողային հարկերը պետք է գանձվեին կեսը մթերքով, կեսը գրամով. սակայն դեռևս XIX դ. առաջին կեսին գերադասվում էր ամբողջ հարկը գանձել մթերքով, քանի որ պրակտիկայում դրամական հարկի դիմաց գանձվում էր ահռելի չափերի հասնող մթերք։ Հեղինակը թվական տվյալներ է հաղորդում նաև առանձին նահանգներից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մասին։ Նկարագրելով բնակչության տեղաշարժերը, երկրի առանձին շրջանների տնտեսական անկումը, մյուսների բարգավաճումը և ցույց տալով, որ հաճախ այդ ամենը իրենց արտահայտությունը չէին գտնում հարկային ցուցակների մեջ, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ որոշակի սահմանված օրենքների ու կարգերի բացակայության պայմաններում, փաստորեն իշխանությունները կամայականորեն նշանակում էին հարկեր, և գյուղացիությունը պարտավոր էր ենթարկվել այդ կողոպուտին և բավարարել ագահ պաշտոնյաների պահանջները։

Ինչպես ասվեց, հարկերի և ռենտայի գանձման գործում միատեսակ կարգ ու կանոնի բացակայությունը անհրաժեշտ էր դարձնում ուսումնասիրել առանձին նահանգներում տիրող դրությունը։ Հայտնի է, որ Իրանի հարավում գտնվող Խուզիստանի նահանգում խոշոր հողատեր և միահեծան իշխանավոր էր Շեյխ Խազալը։ Այդ կալվածատիրական ընտանիքի հողային սեփականություններ ձեռք բերելու պատմության և գյուղացիների դաժան շահագործման մասին արժեքավոր նյութերի ենք հանդիպում ականավոր պատմաբան Ահմեդ Քասրավիի «Խուզիստանի հինգ հարյուրամյա պատմությունը» գրքում[13]։ Քերմանի հողային հարաբերությունների հարցը քննված է Նազեմ օլ Իսլամ Քերմանիի գրքում՝ «Իրանի զարթոնքի պատմությունը»[14]։ Այստեղ ոչ միայն որոշ մանրամասնություններ են հաղորդվում Քերմանի նահանգի, այլև որոշ փաստաթղթեր են բերվում նաև Ֆարսի նահանգի հողային հարաբերությունների մասին և կոնկրետ փաստերով ցույց է տրվում խաների և պետական պաշտոնյաների ոտնձգությունները գյուղացիության նկատմամբ։ Հեղինակը մեջբերումներ է կատարում առանձին գործիչների ճառերից, քաղվածքներ առաջադեմ թերթերից, հատվածներ երկրում տարածվող թռուցիկներից, որոնք մեծապես

---

13 احمد کسروی، تاریخ پانصد ساله خوزستان، تهران ۱۳۳۳

14 ناظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان. تهران

օգնում են պատկերացնելու XIX դ. երկրորդ կեսի Իրանում իշխող ագրարային հարաբերությունները։

Քննարկվող հարցերի մասին նյութեր կան նաև մի շարք այլ պարսիկ հեղինակների աշխատություններում, որոնք, չնայած նվիրված են տարբեր պրոբլեմների, սակայն ինչ-որ չափով շոշափում են նաև նշված հարցերը։ Դրանցից կարելի է հիշատակել Ջավադ Թաբրիզի զադեի «Իրանի տնտեսական կյանքը և նրա սաստիկ աղքատության բուժման ուղին»[15], Մոհամմեդ Ալի Օրադիի «Հողային ռեֆորմներն Իրանում»[16], Ռահիմ Զադե Սաֆավիի «Տրնտեսական Իրանը»[17], Ահմեդ Հումենի «Հողագործության տնտեսությունը»[18], Մաջիդե Եկթայու «Իրանի ֆինանսների պատմությունը»[19], Մուսթաֆա Հոբովիի «Իրանի եկամտահարկերի օրենքների զարգացումը»[20], Մոհամմեդ Ալի Ջամալ զադեի «Իրանի տնտեսական վիճակը»[21]։ Այս գրքերից հատկապես ուշադրության արժանի են երկուսը։ Հումենը «Հողագործության տնտեսությունը» գրքում հատուկ տեղ է հատկացնում հողատիրության ձևերի պատմությանը՝ հնագույն ժամանակներից սկսած։ Սակայն XIX դ. վերաբերյալ նրա բերած տվյալները համեմատաբար աղքատ են։ Այնուհետև պետք է նշել Ջամալ զադեին։ Եթե իրանական աղբյուրները սակավ են անդրադառնում երկրի տնտեսական վիճակին կամ նրա առանձին ճյուղերում զբաղված բնակչության իրավունքներին, ապա այդ իմաստով բացառություն է կազմում այս աշխատությունը, որտեղ որոշակի տվյալներ կան XIX դ. վերջի և XX դ. սկզբների Իրանի տնտեսական դրության վերաբերյալ։

* * *

XIX դ. Իրանի ագրարային հարաբերությունները առանձնակի և ուղղակիորեն չեն ուսումնասիրվել եվրոպական և ռուսական արևելագիտության մեջ։ Նախահեղափոխական շրջանի ռուսական

---

15 جواد تبریزی زاده، زندگی‌اقتصادی ایران و راه چاره فقر شدید آن تهران ۱۳۲۴

16 محمد علی عبادی، اصلاحات ارضی در ایران، تهران ۱۳۴۰

17 رحیمزاده صفوی، ایران اقتصادی، تهران ۱۳۰۸

18 احمد هومن، اقتصاد کشاورزی، تهران ۱۳۳۴

19 مجید یکتائی، تاریخ دارائی ایران، تهران ۱۳۳۵

20 مصطفی‌هروی، تحولات قوانین مالیات بر درآمد ایران، تهران ۱۳۳۳

21 محمدعلی جمال‌زاده، گنج شایگان یا اوضاع اقتصادی‌ایران، برلن ۱۳۳۵

պատմագրությունը պատշաճ ուշադրություն չէր նվիրում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրությանը և հիմնականում զբաղվում էր միայն այդ երկրների քաղաքական ու մշակութային կյանքի, ինչպես նաև կրոնական ու աղանդավորական շարժումների պատմությամբ, իսկ սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը ըստ ամենայնի չէր գիտակցվում։ Չնայած սակայն արևելագետները ուղղակիորեն չէին անդրադառնում հողային սեփականության հարցերին, այնուամենայնիվ իրենց աշխատությունների ընդհանուր հենքի մեջ բարձրացնում էին հավելյալ արդյունքի յուրացման, հողատերերին և պետությանը տրվող հարկերի ու տուրքերի, գյուղացիության կախվածության և այլ էական հարցեր։ Անհրաժեշտ է նշել, որ XIX դ. սկզբների Իրանի ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրումը թույլ է եղել, և այդ բնագավառի վերաբերյալ գիտական դրականության ծավալը այնքան էլ մեծ չէ։ XIX դ. սկզբներին Իրանում իշխող ֆեոդալական հարաբերություններին որոշ չափով անդրադարձել են միայն նույն դարի երկրորդ կեսի ուսումնասիրողները, որոնց գործերը մեծ մասամբ կովկասագիտական թեքում են ունեցել։

Հայտնի է, որ 1828 թ. ավարտվեց Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, իսկ վերջինիս հաստատումով այդ երկրամասերում դեռևս պարսկական տիրապետության ժամանակվանից մնացած հողային և այլ հարաբերությունները անմիջապես չփոփոխվեցին։ Ռուսաստանին միացած երկրների մի շարք քաղաքական ու տընտեսական պրոբլեմներ լուծելու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել այնտեղ տիրող սոցիալ-տնտեսական վիճակը։ Դրանով էլ պիտի բացատրել, որ 30—40-ական թվականներից սկսած հանդես եկան մի շարք վիճակագրական տեսություններ և տնտեսական ընդհանրացնող աշխատանքներ։ Այսպես, հողային հարաբերությունները կարգավորելու համար անհրաժեշտ էր պարզել, թե ինչ իրավունքներ էին վայելում բեկերը, աղալարները, մելիքները և ֆեոդալական վերնախավի այլ ներկայացուցիչներ կամ պարզել, թե ինչ պարտականություններ ունեին գյուղացիները հողատեր ֆեոդալական հիերարխիայի նկատմամբ։ Այս աշխատանքը կատարվեց մեծ ջանասիրությամբ։ Հրատարակվեցին արժեքավոր աշխատություններ, որոնք չնայած հիմնականում պաշտպանում էին ցարական ինքնակալության շահերը, սակայն ընդգրկում էին հսկայական փաստական նյութ, առանց որի հնարավոր չէր հետագա ուսումնասիրումները։

Հենց սկզբից կարելի է նշել, որ այդ աշխատություններում նկատելի էր այսպիսի մի տենդենց. ապացուցել, որ այդ երկրներում պարսկական տիրապետության շրջանում հողի նկատմամբ մասնավոր սեփականություն գոյություն չի ունեցել։ Այդ տեսակետի հիմնական տարածողը եղել է Շոպենը[22], որը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է Հայաստանի տնտեսական ու սոցիալական վիճակը և դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցեր, տվել է Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանի և նրան հաջորդող առաջին տարիների ընդհանուր վիճակի բազմաբովանդակ պատկերը։

Ըստ Շոպենի, ինչպես նաև ռուս այլ հեղինակների, խաները պետական հողերը միայն տնօրինում էին կամ իրենց ծառայությունների դիմաց որպես ռոճիկ ստանում էին պետական հասույթներից օգտվելու իրավունք։ Շոպենը իր այս եզրակացությունը հիմնավորելու ժամանակ ընկնում է որոշ ծայրահեղությունների մեջ, որից և բխում է մի շարք հողատիրական կատեգորիաների նրա սխալ մեկնաբանությունը։

Այս տեսակետը հետագայում քննության են առել բազմաթիվ հեղինակներ։ Ոմանք հանդես են եկել նրա տեսակետների պաշտպանի դերում, իսկ ոմանք փորձել են հերքել կամ ուղղումներ մտցրնել նրանց մեջ։ Սակայն Շոպենի հիմնական միտքը, թե իբր Իրանում հողի մասնավոր սեփականություն գոյություն չի ունեցել, այնուամենայնիվ, հետագայում կրկնվեց բազմաթիվ հեղինակների աշխատություններում և հիմք հանդիսացավ մերժելու Անդրկովկասի «մուսուլմանական բարձր դասերի» հողատիրական իրավունքները։

Հետաքրքիրն այն է, որ Շոպենը այդ կարծիքը հայտնում է այն դեպքում, երբ նրա իսկ բերած փաստերում արդեն դիտված են կապիտալիստական հարաբերությունների ներթափանցման սաղմերը Իրանի գյուղատնտեսության մեջ, մի երևույթ, որն իր զարգացումը գտավ միայն XIX դ. վերջին տասնամյակներում[23]։

---

[22] *И. Шопен*, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852.

[23] Շոպենը մանրամասն կանգ է առնում Նախիջևանի և Օրդուբադի նահանգներում գործող հարկային սիստեմի, տարբեր տուրքերի և զանձումների վրա։ Այս բոլորը հատկապես կարևոր են քննության ենթակա շրջանի՝ Իրանի ագրարային հարաբերությունների ուսումնասիրման համար, քանի որ այդ նահանգներում իշխող կարգերը համարյա ոչնչով չէին տարբերվում հարևան Ատրպատականում, ինչպես և ողջ Իրանում տիրող կարգերից։ Խոսելով այդ նահանգներից դանձվող

Այս հարցին միանգամայն այլ մոտեցում ունեին XIX դ. վերջի ուսումնասիրողները։ Տիգրանովը, որը անձամբ եղել է Ատրպատականում և հատկապես նյութեր հավաքել Իրանի սոցիալական հարաբերությունների վերաբերյալ, մեծ ուշադրություն է դարձրել առևտրային գյուղատնտեսության զարգացման հարցերին և իր աշխատության[24] մեջ ցույց տվել, թե ինչպես գյուղատնտեսական ապրանքների առևտուրը ազդում է արտադրաեղանակի վրա, և բնութագրել XIX դ. վերջերին Իրանի տնտեսական դրության և նրա զարգացման ու հեռանկարների հիմնական պրոցեսները։ Նա իր ուսումնասիրության անկյունաքարը դարձրել է հողի նկատմամբ մասնավոր սեփականության հարցը Իրանում, չնայած, որ նա փաստորեն տվել է տվյալ ժամանակաշրջանի Իրանի ամբողջ սոցիալ-տնտեսական կառուցվածքի պատկերը։ Տիգրանովը բազմաթիվ վաստերով ցույց է տվել, որ XIX դ. երկրորդ կեսին Իրանի սոցիալ-տնտեսական դրության մեջ առաջացած փոփոխությունները և տեղաշարժերը այնպիսի վիճակ էին ստեղծել, որ շարիաթի նորմաները հողատիրության ասպարեզում այլևս չէին արտացոլում երկրի իսկական վիճակը և շարունակում էին գոյություն ունենալ միայն ձևականորեն։ Ագրարային հարաբերությունների մեջ հիմնական հարցը Տիգրանովը համարում էր հողի մասնավոր սեփականության աճը, որը հողատիրության ամբողջ սիստեմում արդեն դառնում էր գերիշխող։ Այդ հարցը նա ուսումնասիրում էր՝ կապված երկրի տնտեսական կյանքի ընդհանուր վիճակի հետ, որպես Իրանի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած փոփոխությունների անխուսափելի արդյունք։ Միաժամանակ, նա ցույց էր տալիս, թե հողի մասնավոր սեփականության աճը իր հերթին ինչպիսի ազդեցություն էր գործում Իրանի սոցիալ-տնտեսական վիճակի վրա և փոփոխություններ առաջացնում իրանական հասարակության տարբեր դասակարգերի փոխհարաբերությունների և

պետական հարկերի մասին՝ նա ջոջափում է ընդհանրապես իրանական պետության եկամուտների հարցը, ցույց տալիս հողատիրության տարբեր կատեգորիաներից, ինչպես՝ պետական, խալիսե և մուլքադարական հողերից գանձվող հարկերի առանձնահատկությունները և չափերը, և այդ ամենից հետո հանգում է այն եզրակացության, որ այդ նահանգներում «հարկերը գանձվում էին այն կարգով, ինչ կարգով գանձվում էին Ատրպատականի նահանգում, ինչպես և ամբողջ ներքին Պարսկաստանում»։

[24] Նույն տեղում, էջ 966—7։ Л. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб., 1905.

տեսակարար կշռի մեջ։ Տիգրանովը ցույց էր տալիս նաև մասնավոր հողատիրության առաջացման աղբյուրները։ Նկարագրելով XIX դ. վերջի իրանական գյուղը, նա մատնանշում է, որ մասնավոր հողատիրությունը աճում էր մի կողմից պետական հողերի յուրացման, և մյուս կողմից՝ գյուղացիության հողամասերի բռնագրավման եղանակով, որով և գյուղացիությունը աստիճանաբար զրկվում էր առանձին հողամասերի նկատմամբ ժառանգական սեփականատիրական իրավունքներից։ Բազմաթիվ փաստերի հիման վրա Տիգրանովը հանգում է այն եզրակացության, որ գյուղացիական հողամասերի և պետական հողերի մեծագույն մասի յուրացման և մասնավոր սեփականության վերածնվելու պրոցեսը ավարտվում է XX դ. սկզբներին։ Այդ հողատիրությունը աճում էր ոչ միայն այլևայլ հողամասերի բռնագրավմամբ, այլև պետության անմիջական նախաձեռնությամբ՝ պետական հողերի վաճառքով։

Տիգրանովը, համեմատելով մասնավոր և պետական հողատիրությունը, ցույց էր տալիս այն ամբողջ պրոցեսը, որի հետևանքով աճում էր առաջինը և նվազում երկրորդը, մի աճ, որը տեղի էր ունենում երկրորդի հաշվին։

Ահա իրերի այս վիճակը վերլուծելիս նա անդրադառնում է նաև հողատիրության այնպիսի կատեգորիաների, ինչպիսիք են՝ թիուլը, մուլքը, ցույց տալիս թիուլդարների և մուլքադարների փոխհարաբերությունները կամ վերջիններիս հարաբերությունները կառավարության հետ։ Այդ ժամանակաշրջանում մուլքադարները ուժեղանալով, փաստորեն հաշվի չէին նստում պետության ներկայացուցիչները հանդիսացող նահանգապետների հետ և դառնում էին նահանգի տերն ու տիրակալը։ Մյուս կողմից խորդեմալիքային հողատիրությունը աստիճանաբար քայքայվում էր։ Արտաքին առևտրի աճը, հողագործ բնակչության տեղաբաշխման մեջ առաջացած փոփոխությունը, մուլքադարային հողատիրության ընդարձակումը և բազմաթիվ այլ հանգամանքներ փոփոխություններ էին մտցնում եկամուտների բաշխման գործում, իսկ այդ բոլորը չէր կարող իր ազդեցությունը չունենալ մինչևիսկ կրոնական հիմնարկներին և սրբավայրերին պատկանող վակֆային հողատիրության վրա, որի հետևանքով, պետական հողատիրության թուլացման հետ միասին, տեղի էր ունենում նաև վակֆային հողերի յուրացում առանձին բարձրաստիճան հոգևորականների կողմից։ Այս պրոցեսը ևս խոշոր մասնավոր հողատիրության աղբյուրներից մեկը հանդիսացավ։

Այս և բազմաթիվ այլ հարցեր Տիգրանովը բարձրացրել է առաջին անգամ և քննված են մեծ բանիմացությամբ. հենց այդ տեսակետից էլ նրա աշխատությունը արժեքավոր աղբյուր է XIX դ. Իրանի ագրարային հարաբերությունները ուսումնասիրելու համար։

Ռուսական պատմագրությունը հետաքրքրել է նաև իրանական գյուղացու իրավունքների հարցը։ Տիգրանովը նույնպես քննության է ենթարկում իրանական գյուղացու հարաբերական «ազատությունը». գյուղացու այն իրավունքը, ըստ որի նա կարող էր մի հողատիրոջից մի այլ հողատիրոջ մոտ գնալ, մի իրավունք, որը XIX դ. վերջերին արգեն խիստ սահմանափակվել էր։

Դեռևս 1841 թ. հրապարակած իր գրքում Բլարամբերդը[25] անդրադարձել է այդ հարցին։ Բազմաթիվ փաստական տվյալների հիման վրա, նա ցույց է տվել, թե ինչպես գյուղացիությունը աստիճանաբար կորցնում էր իր հարաբերական ազատությունը, բուն զարգացող վաշխառության և այլ պատճառներով անձնական կախման մեջ ընկնում կալվածատերերից։ Այդ պրոցեսը էլ ավելի խորացավ հետագայում, և գյուղացին լրիվ կախման մեջ ընկավ կալվածատիրոջից[26]։

Բլարամբերգի գիրքը տալիս է լրիվ վիճակագրական տվյալներ XIX դ. առաջին կեսի համար, որով և արժեքավորվում է այն։ Հեղինակը գտնվել է Իրանում 1837—1840 թթ. և ծառայել է ռուսական դեսպանատանը որպես հատուկ հանձնարարությունների պաշտոնյա։

Իրանում եղած ժամանակ Բլարամբերդը ուշադիր հետևել և ուսումնասիրել է երկրում տիրող դրությունը։ Սակայն նրան օգնել են նաև այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են, հեղինակի խոսքերով ասած, ռուս հյուպատոսների, օտարերկրյա առևտրականների և Հարավային Իրանում գտնվող Բանդար Բուշիրում և Բան-

---

[25] *И. Бларамберг,* Статистическое обозрение Персии, СПб., 1892.

[26] Կալվածատիրոջից գյուղացու կախվածության աստիճանի հարցը շատ է հետաքրքրել ռուս հեղինակներին, սակայն իր վերջնական լուսաբանումը չի գտել նրանց մոտ։ Մինչևիսկ այն հեղինակները, որոնք խոսում են գյուղացու կախվածության ճորտական աստիճանի հասնելու մասին, չեն կարողանում մինչև վերջ հաստատել այն։ Այսպես, ռուսական գլխավոր շտաբի գնդապետ Մեդվեդևը եղել է Իրանում և 1909 թ. հրատարակել մի գիրք. նա կրկնում է այն հակասական միտքը, որ իրանական գյուղացիությունը տնտեսապես ճորտական կախման մեջ էր կալվածատերերից, սակայն իրավունք ուներ միաժամանակ մի կալվածատիրոջ մոտից փոխադրվել մյուսի մոտ։ *А. Медведев,* Персия, военно-статистическое обозрение, СПб., 1909.

դար Աբբասում ծառայող մաքսատան հայ պաշտոնյաների հաղորդած տեղեկությունները։

Հավաքելով հարուստ փաստական նյութ, Բլարամբերգը գրում է իր աշխատությունը, որը նա սկզբում տպագրում է ռուսական աշխարհագրական ընկերության հանդեսում (ИРГО), իսկ երեք տարի հետո՝ որպես առանձին գիրք։ Հեղինակը ընդարձակ տեղեկություններ է տալիս Իրանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի վերաբերյալ։ Գրքում ընդգրկված նյութը, քննության ենթարկված հարցերի շրջանակները մեծապես նպաստում են Իրանի ագրարային հարաբերությունների ուսումնասիրմանը և որպես այդպիսին Ռուսաստանում հրատարակված առաջին աշխատություններից է։ Բլարամբերգի մոտ, օրինակ, ցույց է տրված, թե ինչպիսի վերաբերմունք ունեին հողի նկատմամբ բնակչության տարբեր խավերը կամ թե ինչպիսի ռենտա էր վճարում գյուղացիությունը հողատերերին XIX դ. 30-ական թթ.։ Հեղինակը վերլուծում է ռենտայի տարբեր ձևերը, կալվածատիրոջը տրվող բերքաբաժնի չափը, պետության կողմից գանձվող հարկերի ձևերն ու քանակը, ինչպես նաև դրանց մթերային և դրամային համամասնությունը։ Պետք է ընդգծել, որ տարբեր աղբյուրներում եղած նյութերի հետ համեմատած այդ բոլորը միանգամայն արժանահավատ են։

Բլարամբերգը մանրամասն ուսումնասիրել է նաև ցարական Ռուսաստանի և Իրանի միջև եղած առևտրական հարաբերությունները, որոնք ընդհանրապես ռուսական ուսումնասիրողների հատուկ ուշադրության կենտրոնում են եղել։ Այդ իր նշանակությունն է ունեցել նաև ցարական Ռուսաստանի տնտեսական ներթափանցման տեսակետից։

1900 թթ. Ռուսաստանի ռազմական մինիստրությունը Ռիտիխին ուղարկում է Իրան՝ Կասպից ծովից մինչև Հնդկական օվկիանոս երկաթգիծ անցկացնելու հնարավորությունները ուսումնասիրելու համար։ Ռիտիխը դեռևս 1896 թ. հրատարակած իր գրքում բազմապիսի տվյալներով ու հարուստ փաստերով նկարագրել է Իրանի տնտեսական ընդհանուր վիճակը[27]։ Իրանում գտնված ժամանակ կովկասյան հրամանատարության հանձնարարությամբ Ռիտիխը տարբեր բնույթի և բովանդակության նյութեր է հավաքում իր ամբողջ ճանապարհի շրջակա բնակավայրերի վերաբերյալ։ Այս նյութերը հրապարակված են Ռիտիխի «Հաշվետվություն Պարսկաստան կատարած ճամփորդության մասին» գրքում[28]։

---

[27] Ритих, Политико-статистический очерк Персии, СПб., 1896.

[28] Ритих, Отчет о поездке по Персии, СПб., 1900.

1893—94 թթ. ռուս-պարսկական առևտրական հարաբերությունների վիճակը և նրա զարգացման հեռանկարները ուսումնասիրելու համար Իրան է գործուղվում Տոմարան, որը իր հետազոտությունները Իրանի տնտեսական ընդհանուր դրության վերաբերյալ հրատարակում է առանձին գրքով (1895 թ.)՝ «Իրանի տնտեսական դրությունը» վերնագրով[23]։

Ճիշտ է, ելնելով իր գործուղման բնույթից, Տոմարան հիմնականում շոշափում է երկու երկրների առևտրական հարաբերությունների հարցերը, բայց նա առանձնակի քննարկում է նաև Իրանի սոցիալ-տնտեսական վիճակը, ցույց տալիս XIX դ. վերջերին հողային ընդարձակ սեփականությունների կենտրոնացումը առանձին մարդկանց ձեռքում որպես մի նոր երևույթ, որը մեծապես տարբերվում է մինչ այդ գոյություն ունեցող հողատիրական կատեգորիաներից։ Տոմարան իրանական պետության տնտեսական աղքատության պատճառները տեսնում էր երկրի ողջ վարչական սիստեմի նեխվածության ու հետամնացության մեջ։ Հողային հարկերի հարցը, երկրի ֆինանսական վիճակը, եկամուտների աղբյուրը նույնպես տեղ են գտել Տոմարայի ուսումնասիրության մեջ։

Միանգամայն իրավացիորեն Տոմարայի աշխատությունը համարվում է Իրանի ագրարային հարաբերություններին նվիրված ռուսական իրանագիտության լավագույն գործերից մեկը։ Այդ գործը պատշաճ մակարդակով կատարեց այնպիսի մի փորձառու պաշտոնյա, որը, ինչպես ասվեց, հատկապես գործուղվել էր Իրան երկրի տնտեսական դրությունը ուսումնասիրելու նպատակով։

Նույնպիսի նպատակով Իրան էր գործուղվել նաև Կայմը, որը, Իրանում ճամփորդելու և ագրարային հարաբերությունների հետ մոտիկից ծանոթանալու դրդապատճառների մասին խոսելով, գրում է. «Ռուսաստանում մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում պարսկական հողերի նկատմամբ, որոնց մասին մենք ռուսներս ոչ մի պատկերացում չունենք, չնայած այն հանգամանքին, որ ավելի քան երեք հարյուր տարի ապրում ենք Իրանի հարևանության մեջ։ ...Ես նպատակ եմ դրել,—շարունակում է հեղինակը,—հնարավորության սահմաններում մի բրոշյուր կազմել, որը պարսկական հողերով հետաքրքրվողներին գեթ փոքր-ինչ ծանոթացնի արդյունաբերության համար այս երկրամասի հարստություններին, այնտեղ իշխող կարգերին և պարսկական հողեր ձեռք բերելու

[23] *М. Томара*, Экономическое положение Персии, СПб., 1895.

հնարավորություններին։ Ահա հենց այդ նպատակով էլ ես մեկնեցի Հյուսիսային Իրան, ուսումնասիրեցի և հավաքեցի անհրաժեշտ նյութեր, որպեսզի այդպիսով հնարավորության սահմաններում տրվի բոլորի կողմից մոռացված երկրի հարստությունների լրիվ պատկերը»։

Եվ ահա Կայեմը, ամփոփելով իր ուսումնասիրությունների արդյունքները, գրում է. «Պարսկական հողեր» աշխատությունը[30]։

Իրանի տնտեսության ընդհանուր հետամնացության պատճառները բացահայտելիս հեղինակը նշում է. «Հարց ու փորձ անելով տեղական գյուղացիությանը՝ ռայթներին, թե ինչու այդքան ամայի հողեր կան նրանց մոտ և ինչու նրանք այդքան քիչ և վատ են մշակում հողերը, ամենուրեք ստանում էի այն պատասխանը, որ բնակչությունը հողի մշակությամբ քիչ է զբաղվում, որովհետև խաները և վարձակալները խեղդում են նրան, վերցնելով այն ամենը, ինչ նա վաստակում է»։

Կայեմին հետաքրքրել է նաև ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը Իրանի գյուղատնտեսության մեջ։ Նա նշում է, որ գյուղացին իր արտադրանքը կարող էր վաճառել միայն խանի կամ վարձակալի թույլտվությամբ և նրա նշանակած գնով։ Գնելու իրավունքը մեծագնորդներին շնորհելու համար խաները մեծ գումարներ են վերցնում և այդ պատճառով էլ գյուղացիները գերադասում են սնվել խոտով, քան թե աշխատել խաների կամ վարձակալների օգտին։

Պետք է նշել, որ ռուս հեղինակները Իրանի գյուղատնտեսության մեջ ապրանք-դրամային հարաբերությունների զարգացումը նկատել էին ավելի վաղ շրջանում։

1849—52 թթ. թուրք-պարսկական սահմանային վեճերը կարգավորող ռուսական կոմիսար Չիրիկովը Իրանի ագրարային հարաբերությունների մասին հավաքած իր նյութերը ամփոփել է «Ճամփորդական օրագրում»[31]։ Աշխատության մեջ աշխարհագրական նկարագրություններից բացի, Իրանի սոցիալ-տնտեսական կառուցվածքը բնորոշող հարուստ նյութ է բերված և հատկապես փաստեր ապրանք-դրամային հարաբերությունների զարգացման վերաբերյալ, մատնանշված է մեծագնորդի դերը Իրանի գյուղատնտեսության մեջ և ցույց է տրված հողի առուծախի լայն

---

[30] *Г. Казж*, Персидские земли или «Новая апельсиния», Красноводск, 1914.

[31] *Е. Чириков*, Путевой журнал Чирикова.

կիրառումը XIX դ. կեսերին։ Զիրիկովը եղել է նաև Քուրդստանում, և նրա հաղորդած տեղեկությունները լրացնում են ընդհանրապես քրդերի ներքին կյանքի վերաբերյալ եղած պատկերը։

Պետք է նշել, որ Իրանում բնակվող տարբեր ցեղերի, այդ թվում քրդական ցեղերի, լորերի, բախտիարների և մյուսների սոցիալական կառուցվածքը և ագրարային հարաբերությունները հետաքրքրել են ռուս ուսումնասիրողներին։

Իրանի ցեղերի կյանքին և կենցաղին, ինչպես նաև նրանց մոտ իշխող ագրարային հարաբերությունների ուսումնասիրմանը նվիրված արժեքավոր նյութերի կարելի է հանդիպել ռուս ճանապարհորդ ռուսական աշխարհագրական ընկերության անդամ՝ Բոդեի աշխատության մեջ[32]։ Նա առաջիններից էր, որ ներթափանցեց (1835 թ.) Արևմտյան Իրանի անանցանելի լեռնաշխարհում բնակվող լորերի շրջանը։ Նրան հաջողվեց լինել նաև բախտիարիների բնակավայրերում և մոտիկից ծանոթանալ նրանց հետ։ Նա եղել է նաև հյուսիսային շրջաններում, հատկապես Թուրքմենստանում և ուսումնասիրել տեղի ցեղերին։ Բոդեն իր հետազոտությունների արդյունքը հրապարակեց մի շարք ակնարկներում, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում լորերի և բախտիարների մոտ իշխող ցեղային, հողային և այլ հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից։

Ի թիվս այլ խնդիրների Իրանի առանձին, հատկապես հյուսիս-արևելյան նահանգների և այնտեղ բնակվող տարբեր քոչվոր ցեղերի ագրարային հարաբերությունների վերաբերյալ հարուստ տեղեկություններ է հաղորդում աշխարհագրագետ Ռիտերը[33]։ Ռիտերի աշխատանքը հեղինակի մահվան պատճառով մնացել էր անավարտ. ռուսական աշխարհագրական ընկերության հանձնարարությամբ Խանիկովը լրացնում է այն և հրատարակում։ Շարունակելով Ռիտերի գործը, Խանիկովը ավելացնում է նաև Սիստանի նահանգը, որի հողօգտագործման, ոռոգման, հարկային սիստեմի, նրա չափերի և այլ հարցերի մասին բավականին հետաքրքիր փաստեր է բերում։ Խանիկովը ուսումնասիրել է նաև առանձին ցեղերի կյանքն ու կենցաղը։ Հատկապես ուշագրավ են նրա նյութերը Քուրդստանի մասին, որտեղ նա ճամփորդել է 1852 թ.։

Իրանի տարբեր ցեղերի ներքին կառուցվածքի, ընդհանրապես հողատիրության վիճակի և նրանց զարգացման ուղիների հարցերը

---

[32] *Боде,* Очерки Туркменской земли и юго-восточного побережья Каспийского моря, 1890; *его же,* Путевые заметки, СПб., 1854.

[33] *К. Риттер,* Иран, ч. I, СПб., 1874.

ուսումնասիրելիս ցարական պաշտոնյաների ուշադրության կենտրոնից չէր կարող դուրս մնալ նաև համայնքի, նրա վիճակի և քայքայման կարևոր հարցը։ Այս առումով, հատկապես պետք է նշել Եղիազարովի աշխատությունը[34], նվիրված Անդրկովկասի երկրների գյուղական համայնքի ուսումնասիրմանը, մասնավորապես պարսկական տիրապետության տակ եղած ժամանակաշրջանում։ Միանգամայն հասկանալի է, որ հյուսիսարևմտյան Իրանում գտնվող տերիտորիաների համայնքի ներքին կյանքը վերլուծելու համար հեղինակը պետք է շոշափեր նաև հողատիրության ձևերը և հողօգտագործման եղանակները, քանի որ միայն այդ եղանակով նա կարող էր ցույց տալ համայնքի անդամ գյուղացիների վիճակը։ Գյուղական համայնքի օբյեկտիվ նկարագրությունը նպաստում է հեղինակին ճշգրտորեն տեսնելու նրա քայքայման պրոցեսը. համայնքի առանձին անդամները աստիճանաբար դառնում էին իրենց տրամադրության տակ եղած հողերի մասնավոր սեփականատերերը։ Նա բազմակողմանի ուսումնասիրել է համայնքի մեջ տեղի ունեցած շերտավորումը, տարբեր խավերի առաջացումը, համայնքների ներքին կառավարումը, ընտանիքները և նրանց իրավական վիճակը, տրվելիք տուրքերի և հարկերի քանակն ու չափերը, մասնավոր հողատիրության առաջացումը համայնքի ներսում և այլն։

Գյուղական համայնքների տնտեսական վիճակից բացի, հեղինակը անդրադառնում է նաև մասնավոր հողատիրության ձևերին, ինչպես նաև Իրանի տիրապետության տակ գտնվող կիսանկախ խանություններում գործող հողօգտագործման եղանակներին և այլն։ Ըստ Եղիազարովի խոշոր հողատիրությունը Իրանում առաջանում էր ինչպես համայնքի քայքայումից, այնպես էլ առանձին անձանց իրենց ծառայության դիմաց պետության կողմից տրված հողերի յուրացումից։

Իրանի առանձին նահանգներում և գավառներում տեղի ունեցող այդ պրոցեսին անդրադարձել է նաև Ավերյանովը, որը շրջագայել է Ատրպատականում 1899 թ.[35]։ Իր հաշվետվություններում Ավերյանովը նշում է, որ այդ նահանգի առանձին մահալների կառավարիչները փաստորեն ամենախոշոր հողատերերն էին, իսկ հողատեր գյուղացիներ գրեթե չկային։ Նա մոտիկից ծանոթացել է

---

[34] *С. Егиазаров,* Исследования по истории учреждений Закавказья, ч. I.

[35] *П. Аверьянов,* Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900.

Խոյի, Ղարադաղի, Մարանդի, Արդաբիլի, Ղազվինի և այլ մահալների տնտեսական վիճակին և դրանցից յուրաքանչյուրում գանձվող ռենտայի, տուրքերի և հարկերի չափերի մասին տվել է ճշգրիտ տեղեկություններ։

Ավերյանովը կարողացել է դիտել նաև մուսուլման խոշոր հոգևորական ներկայացուցիչների դերը ֆեոդալական հողատիրության պայմաններում, երբ նրանք հանդես էին գալիս որպես հարկահավաքման մեծագնորդներ։ Նա միաժամանակ ցույց է տվել, որ կրոնական մոլեռանդությունը ավելի բնորոշ էր Ատրպատականի քաղաքային բնակչությանը, քան գյուղի քայքայված ու ընչազուրկ մասսաներին։

Ավերյանովի հաղորդումները Ատրպատականի մասին փաստորեն լրացվում են Օդրանովիչի «Արդաբիլի և Սարաբի պարսկական գավառներ»[36] և Արտամոնովի «Հյուսիսային Ատրպատական»[37] գրքերում բերված տվյալներով։

Տարբեր նահանգների հարկերի և տուրքերի հարցին անդրադարձել է և Բերարը, որի բերած փաստերը ցույց են տալիս, որ երկրի աշխատավորության շահագործման չափերը դարավերջին ավելի ևս մեծացել էին[38]։ Հողատերերը և պետությունը, XIX դ. վերջերին առաջվա պես շարունակում էին ռենտա և հարկեր գանձել գյուղացիներից, բայց արդեն դրանք ոչ թե բերքի ավանդույթային տասնորդն էին կազմում, այլ քսանհինգ և մինչև իսկ երեսուն տոկոսը։ Կարևոր է հեղինակի նաև այն դիտողությունը, որ այն ժամանակ ևս հարկերի և ռենտայի բնագավառում միատեսակ կարգ գոյություն չուներ երկրում. տարբեր նահանգներում, գավառներում և մարզերում այն տարբեր բնույթ ուներ։ «Ահա այդ պայմաններում, նշում է հեղինակը, կարելի է պատկերացնել դժբախտ գյուղացիների դրությունը, որոնք ենթարկվում էին այդպիսի գիշատիչ կողոպուտի և դատապարտված էին պայքարելու այնպիսի լիազորված մարդկանց դեմ, որոնք իրավունք էին ստացել նրանց հաշվին ապրելու»։

Նախահեղափոխական հեղինակների շարքում իր ուրույն տեղն ունի Ատրպետը, որը մի քանի գրքեր է հրատարակել Ալեքսան-

---

[36] *О. Огранович,* Провинции Персии Ардебильская и Сераоская, 1875.

[37] *Л. Артамонов,* Северный Азербайджан, Тифлис, 1890.

[38] *В. Берарь,* Персия и персидская смута, СПб., 1912.

դրապոլում[39]։ Ատրպետի փոքրածավալ աշխատություններում հետաքրքիր փաստերով նկարագրված է XIX դ. երկրորդ կեսի Իրանի սոցիալ-տնտեսական վիճակը։ Նրա «Մուհամմեդ Ալի շահ» գրքի վերջում հետաքրքիր մանրամասնություններ կան Պարսկաստանի պետական ապարատի կառուցվածքի վերաբերյալ, իսկ գրքի հավելվածում հարուստ փաստերով ներկայացված է գյուղացիության վիճակը։ Բացի հիշյալ աշխատություններից հիշատակության արժանի են նաև Կաֆտիրևի, Գագեմեյստերի, Բերիոզինի, Բարոն Կորֆի, Մասալսկու, Գենչեի, Մաքսիմովիչ-Վասիլկովսկու, Բաումգարտենի, Տեր-Ղուկասովի և ուրիշների աշխատությունները[40], որոնց մեջ շոշափված են Իրանի աշխարհագրության, բնակչության կազմի, նրա տեղաբաշխման, Իրանի վաչկատուն ցեղերի տնտեսական կյանքի, երկրի ընդհանուր առևտրի, պետական եկամուտների, հարկերի, տուրքերի, հողային ռենտայի, հողատիրության ձևերի, հողօգտագործման եղանակների, գյուղացիության ֆեոդալական շահագործման և ընդհանրապես ագրարային հարաբերությունների հետ կապված շատ հարցեր։

Այսպիսով, XIX դ. ռուսական իրանագիտության մեջ աչքի էին ընկնում վիճակագրական տեսությունները կամ առևտրական տվյալների ամփոփումները, ճանապարհորդների գրառումները կամ թե պաշտոնական անձանց, դիվանագիտական ներկայացուցիչների ու ռազմական գործիչների հուշերը, որոնք արժեքավոր աղբյուրներ են երկրի ներքին և արտաքին հարաբերությունների բազմաթիվ հարցերի ուսումնասիրման համար։ XIX դ. երկրորդ կեսի ռուսական արևելագիտության մեջ կիրառվում էին գիտական մեթոդներ և որոշակիորեն ձևավորվում էին դրական ավանդույթ-

---

[39] *Атрпет,* Рахим хан Сардар, Александрополь, 1910; *Мамед Али шах,* Народное движение в стране льва и солнца, Александрополь, 1909, Откупная система в Персии, Александрополь, 1901.

[40] *Д. Кафтырев,* Исторические, географические и статистические сведения о Персии, СПб., 1829; *Ю. Гагамейстер,* О европейской торговле в Турции и Персии, «Журнал мануфактур и торговли», 1838, № 2; *И. Березин,* Путешествие по Северной Персии, Казань, 1852; *Ф. Корф,* Воспоминания о Персии, 1834—1835, СПб., 1838; *Н. Масальский,* Письма русского из Персии, т. 1—2, СПб., 1844; *Генче,* Специальная статистика Персии, «Известия КО ИРГО», 1876, вып. IV; *Максимович-Васильковский,* Отчет о поездке по губернаторствам Западной Персии (Азербайджана и Персидского Курдистана), 1900—1901 год, ч. 1—2, Тифлис, 1903; *К. А. Баумгартен,* Поездка по Восточной Персии... в 1894 г., СПб., 1896; *Г. И. Тер-Гукасов,* Экономические интересы России в Персии, М., 1915.

ներ։ Հենց այդ պատճառով էլ այդ գրքերի մեծ մասը մինչ այժմ էլ պահում է իր թարմությունը և բազմակողմանի հետազոտությունների համար հսկայական նյութ է ծառայում։ Սակայն, անհրաժեշտ է նշել, որ այդ աշխատությունները զուրկ չեն մեթոդոլոգիական թերություններից, որոնք հետևանք էին ձևավորվող բուրժուական պատմագրության և ընդհանրապես ժամանակի գիտության զարգացման մակարդակի։

* * *

Եթե Իրանի մասին Ռուսաստանում հրապարակված աշխատությունները ընդգրկում են գլխավորապես հյուսիսային շրջանների տնտեսական վիճակը և միայն առանձին դեպքերում են շոշափում Հարավային Իրանի սոցիալ-տնտեսական ընդհանուր կացությունը, ապա արևմտաեվրոպական, հատկապես անգլիական և ֆրանսիական հեղինակները լայն տեղեկություններ են տալիս Իրանի հարավային, հարավարևելյան և հարավարևմտյան շրջանների սոցիալ-տնտեսական վիճակի և հողային հարաբերությունների մասին։

Արևմտաեվրոպական պաշտոնական ներկայացուցիչները, զինվորականները, տարբեր միսիաների անդամները, ճանապարհորդները և մինչևիսկ միսիոներները եղել են Իրանի տարբեր և միանգամայն չուսումնասիրված շրջաններում և հարուստ նյութ են հավաքել այդ վայրերի վերաբերյալ ու հետագայում հրատարակել առանձին գրքերով։ Այդ գործիչներից մի մասը եղել է նաև Հյուսիսային Իրանում, և նրանց հաղորդած տվյալները հնարավորություն են տալիս, ռուսական աղբյուրների տվյալների բաղդատումով, տալ դրության ավելի իրական պատկերը։

Հասկանալի է, որ արևմտաեվրոպական պետությունները ունեին իրենց որոշակի շահերը Իրանում և այդ ամենը այս կամ այն ձևով իրենց արտացոլումն են գտել նշված հեղինակների գործերում։ Սակայն, այնուամենայնիվ, նրանք տալիս են հսկայական փաստական նյութ։

Պետք է նշել, որ արևմտաեվրոպական ուսումնասիրողներին մասնավորապես հետաքրքրել է իրանական գյուղացու, այսինքն՝ հիմնական արտադրողի. իրավական վիճակը։ Այս հարցին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, սակայն միշտ չէ, որ նրանք կարողացել են տալ սպառիչ պատասխան։ Անգլիացի միսիոներ Ջեյմս Բասեթը, որը 1887 թ. հրատարակեց «Պարսկաստանը

իմամների երկիր»[41] սիմվոլիկ վերնագրով իր գիրքը, նկարագրելով հսկայական հարստությունների, այդ թվում և հողային հարստությունների կենտրոնացումը առանձին արքայաղների, պաշտոնյաների և խաների ձեռքում՝ մի կողմում, և մասսայական աղքատացումը՝ մյուս կողմում, հատուկ ուշադրություն է դարձնում գյուղացու իրավունքների վրա և շեշտում, որ իրանական գյուղացին կարող էր ցանկացած պահին հեռանալ կալվածատիրոջ հողից։ Այդ հարցին անդրադարձել է նաև Գասպար Դրուվիլը «Ճանապարհորդություն Պարսկաստանում 1812—1813 թթ.» երկհատորյակում[42]։ Ուշադրության արժանի է Դրուվիլի այն դիտողությունը, որ Պարսկաստանում գյուղատեր լինելը դեռ չէր նշանակում գյուղացիների վրա որևէ իրավունք ունենալ։ Սա, իհարկե, շատ կարևոր հանգամանք է։ Սակայն որոշ հեղինակներ այդ հարցը ճիշտ չըմբռնելով, փորձել են հանդես գալ Իրանում գոյություն ունեցող հողային հարաբերությունների պաշտպանի դերում։ Այսպես, անգլիացի Վաթսոնը[43], նկարագրելով գյուղացիների դրությունը հատկապես Թեհրանի շրջակայքում, հանգում է այն սխալ եզրակացության, որ նրանց դրությունը վատ չէր, և որ ճնշումների մասին եղած խոսակցությունները չափազանցված են։

Որոշ հեղինակներ նաև շփոթում են պետական հողատիրության և պետության գերագույն հողատեր լինելու հասկացողությունները։

Անգլիացի Էդվարդ Սթեյքը 1882 թ. հրատարակեց իր օրագիրը՝ «Վեց ամիս Պարսկաստանում»[44] վերնագրով, որի երկրորդ հատորում անդրադառնալով հողատիրության տարբեր ձևերի հարցին, կասկածի տակ է առնում պետական խալիսա հողերը մասնավոր մարդկանց վաճառելու վերաբերյալ փաստերը։ Նա գտնում է, որ ընդհանուր տենդենցը արբաբի հողերի՝ տարբեր եղանակներով պետական սեփականության վերածվելն էր։ Սա, իհարկե, զուտ թյուրիմացություն է, քանի որ եթե իսկապես մասնավոր հողերի բռնագրավման և պետական հողերի ֆոնդի մեջ մտնելու փաստեր միշտ էլ կային, ապա դա «ընդհանուր տենդենց չէր»։ Մյուս կողմից՝ հայտնի է, որ պետական հողերը վաճառվում էին մեծ մասշտաբներով։ Անկախ վերոհիշյալ հանգամանքներից, Սթեյքը ու-

---

[41] *J. Bassett.* Persia, The Land of the Imams, London, 1887.

[42] *G. Drouville.* voyage en Perse, pendent les annees 1812 et 1813.

[43] *R. Watson.* A History of Persia from the beginning of the nineteenth century to the year 1858, London, 1866.

[44] *E. Stack.* Six months in Persia, London, 1882.

շադրության արժանի դիտողություններ ունի գյուղացու և կալվածատիրոջ, ինչպես նաև կալվածատիրոջ ու պետության փոխհարաբերությունների մասին։

Բացի արևմտաեվրոպական ճանապարհորդներից, միսիոներներից և այլ ներկայացուցիչներից, Իրանի սոցիալ-տնտեսական վիճակի կամ նրա ագրարային հարաբերությունների մասին նյութեր են հավաքել նաև պաշտոնական անձինք՝ դեսպանները, հյուպատոսները, գեներալները և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ։ Հայտնի է, որ XIX դ. սկզբներին հատուկ միսիայով Իրան էր եկել Ջոն Մալքոլմը։ Նա հրատարակեց երկհատորանոց մի աշխատություն «Պարսկաստանի պատմությունը»[45] (1815) խորագրով, որի երկրորդ հատորում կանդ է առնում պետական և առանձին կալվածատերերի հողերի վարձակալման եղանակների և տրվելիք բերքաբաժնի չափի վրա։ Ուշագրավ է նրա երկու դիտողությունը. նախ այն, որ գյուղատնտեսության զարգացման նպատակներով, որը, ի դեպ, ընդգծված քաղաքականություն չէր. կառավարությունը ամայի հողեր էր տրամադրում հողագործներին. մանավանդ, եթե նրանք ցանկանում էին այգի տնկել կամ շենք կառուցել։ Եվ երկրորդ այն, որ կառավարությունը սահմանամերձ վայրերում քոչվոր ցեղերին, նրանց նստակյաց դարձնելու նպատակով, ամենանպաստավոր պայմաններով մշակելի հողեր էր հատկացնում, բայց հազվադեպ էր պատահում, որ այդ ցեղերը հողը մշակեին իրենց սպառման պահանջներից ավելին։ XIX դ. սկզբի Իրանի ագրարային հարաբերությունների մասին Մալքոլմի բերած տվյալները հետագայում օգտագործվել են անգլիացի և բազմաթիվ օտարազգի այլ հեղինակների կողմից։

Կարելի է հիշատակել նաև անգլիական դեսպան Հարֆորդ Ջոնս Բրիջզին, որը հետաքրքիր հիշատակումներ ունի Իրանի XIX դ. սկզբների ագրարային հարաբերությունների վերաբերյալ[46]։ Ճիշտ է, նրա գիրքը մեծ մասամբ վերաբերում է Իրանի քաղաքական կյանքին, սակայն քանի որ նա երկար շրջագայություններ է կատարել երկրում, ապա մոտիկից կարողացել է ուսումնասիրել նրա սոցիալ-տնտեսական կյանքի հետ կապված մանրամասներ։

Իրանի վարչական կառուցվածքի, հարկային սիստեմի և հողօգտագործման եղանակների մասին նյութեր կան նաև մի ուրիշ

---

[45] *J. Malcolm*, The History of Persia, London. 1816.

[46] *H. Brydges*, An account of the transactions of His Majesty's mission to the court of Persia in the years 1807—1811, vol. I.

անգլիական հյուպատոս Յեյթի «Խորասան և Սիստան»[47] աշխատության մեջ. Սիստանի նահանգը շատ բանով էր տարբերվում Իրանի մյուս նահանգներից, ուստի և հետաքրքիր են հեղինակի հաղորդումները։

XIX դ. երկրորդ կեսի Իրանի սոցիալ-տնտեսական վիճակի, այդ թվում և ագրարային հարաբերությունների մասին եղած աղբյուրներից ամենահարուստ տեղեկություններ պարունակում է Քերզոնի հայտնի աշխատությունը՝ «Պարսկաստանը և պարսկական հարցը»[48], որը լույս է տեսել 1892 թ.՝ երկու հատորով։ Հեղինակը հսկայական նյութ է հավաքել Իրանի տնտեսական վիճակի և նրա արտաքին առևտրի վերաբերյալ։ Նա չի թաքցնում, որ նրան այդ բանը հետաքրքրում էր, քանի որ Իրանը ընդարձակ և շահավետ շուկա էր անգլիական առևտրի համար։ Քերզոնը վիճակագրական տվյալներ է մեջ բերում պետական ընդհանուր եկամուտների մասին և տալիս է յուրաքանչյուր նահանգից ստացվող եկամտի գումարը։ Նա անդրադառնում է վարչական ապարատի ամբողջ հիերարխիայի հարցին և ցույց տալիս նրա գիշատիչ բնույթը գյուղացիական մասսաների նկատմամբ։ Նա մանրամասն վերլուծում է հարկային սիստեմը, ցույց տալիս հարկերի տարբեր ձևերը, նրանց գանձման եղանակները։ Հատկապես հետաքրքիր են հեղինակի այն տվյալները, որ որոշ շրջաններ հարկադրվում էին ընդունված չափից ավելին, իսկ մյուսները չափից պակաս։ Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ իրանական գյուղացին հեզ է, ենթարկվող և եթե նա կարողանա արդարացիորեն կդժգոհի պետական գանձումներից։

Արևմտաեվրոպական հեղինակները Իրանի ընդհանուր վիճակի ուսումնասիրության ժամանակ մասնավոր ուշադրություն են դարձրել նաև ազգային փոքրամասնություններին, նրանց սոցիալ-քաղաքական վիճակին՝ դրանով իսկ բացահայտելով երկրում իշխող կարգերի ինքնատիպ ու առանձնահատուկ բազմաթիվ երևույթներ։

Հայտնի է, որ Քուրդստանը այդ ժամանակ բաժանված էր երկու մասի։ Արևմտյան Իրանի սահմանամերձ շրջաններում բնակվող քուրդ, ինչպես և լոր ու այլ ցեղերը մեծապես հետաքրքրում էին արևմտյան պետություններին՝ քաղաքական նպատակներով։ Արևմտաեվրոպական բազմաթիվ ներկայացուցիչներ այցելել են այդ վայրերը և անհրաժեշտ նյութեր հավաքել ցեղերի կյանքի ու

---

[47] *C. Yate*, Khurasan and Sistan, London, 1900.

[48] *G. Curzon*, Persia and the Persian Question, vol. I-II, London, 1892.

կենցաղի, արտադրաեղանակի և այլ հարցերի մասին։ Օրինակ, անգլիացի Բրանտը հատուկ մի էքսպեդիցիայով եղել է Քուրդստանում, մոտիկից ուսումնասիրել այդ երկրամասը և իր հետազոտությունների արդյունքը հրատարակել 1841 թ.[49]։ Բրանտի աշխատության մեջ արժեքավոր մանրամասնություններով տրված են քուրդ իսլամների հողային սեփականության ձևերը, այդ հողերի վրա աշխատող գյուղացիների տնտեսական կախվածությունը կալվածատիրոջից, նրանց կյանքի անտանելի ծանր պայմանները, տեղեկություններ ս.առանձին քուրդ ընտանիքների տրամադրության տակ եղած հողամասերի, անասունների գլխաքանակի և այլևայլ հարցերի վերաբերյալ։ Քուրդստանի մասին ուսումնասիրություն է կատարել նաև անգլիացի Ֆրեյզերը, որը Կոստանդնուպոլսից մինչև Թեհրան կատարած իր ճամփորդության ընթացքում, ի թիվս բազում այլ երկրամասերի՝ հետազոտել է նաև Քուրդստանը, ըստ որում ոչ միայն բուն Քուրդստանում, այլև հյուսիսարևելյան Իրանում գտնվող Բոջնուրդում, Դերեգեզում, և Քելաթում բնակվող քրդերի դրությունը[50]։ Հենց այդ պատճառով էլ նրա բերած տվյալները ամբողջական են և վերաբերում են ինչպես Արևմտյան, այնպես էլ արևելյան Իրանի տնտեսական վիճակին։ Ֆրեյզերը նշում է նաև, թե ինչպես իրանական իշխանությունները քուրդ գյուղացիությանը Խորասանի շրջանում հնազանդ պահելու համար ենթարկում էին հարևան թուրքմեն ցեղերի ասպատակություններին և այդպիսով հսկայական կորուստներ և վնասներ պատճառում քրդերին։

Վերոհիշյալ հեղինակների հավաքած նյութերը շատ մեծ արժեք են ներկայացնում XIX դ. առաջին կեսին Քուրդստանում, ինչպես նաև ամբողջ Արևմտյան Իրանում իշխող ագրարային հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից, հատկապես եթե նկատի ունենանք, որ ուրիշ գրավոր փաստաթղթեր համարյա չեն մնացել։

Պետք է նշել, որ շատ քչերին է հաջողվել ներթափանցել Արևմտյան և մասամբ Կենտրոնական Իրան և ուսումնասիրել այնտեղ բնակվող բախտիարիների ու լորերի կյանքն ու կենցաղը։ Այդ իսկ տեսակետից էլ արժեքավոր են Ռաուլինսոնի ուսումնասիրություն-

---

[49] *Brant*, Notes on a Journey through a part of Kurdistan, London, 1841

[50] *J. Fraser*, A Winters Journey (Tatar) from Constantinople to Tehe-ran with travels through various parts of Persia, London, 1838.

ները[51]։ Նա Իրանում եղել է 1835, 1839, 1841 թթ., իսկ 1859—60 թթ. անգլիական դեսպան էր Թեհրանում։ Նա ոչ միայն հայտնի ճանապարհորդ էր, այլև ականավոր արևելագետ։ Ռաուլինսոնը նկարագրել է բախտիարիների և լորերի ցեղային կառուցվածքը, բնակչության տեղաբաշխումը, անդրադարձել Արևմտյան Իրանի ագրարային հարաբերությունների հարցին և այլն։

Արևմտաեվրոպական պետություններին հետաքրքրել է նաև հյուսիսարևմտյան Իրանում բնակվող քրիստոնյա ասորիների վիճակը։ Հայտնի է, որ իրենց նվաճողական քաղաքականությունը իրականացնելու համար արևմտաեվրոպական տերությունները կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ։ Այդ թվում նրանք լայնորեն օգտագործում էին կրոնական հակասությունները։ Ուրմիայի շրջանում ապրող ասորիների կյանքն ու կենցաղը, ինչպես նաև նրանց մոտ իշխող ագրարային հարաբերությունները մանրամասն ուսումնասիրել է ամերիկացի միսիոներ Պերկինսը, որը ութ տարի ապրել է այդ վայրերում[52]։ Պերկինսը ցույց է տվել խաների անսահման իշխանությունը իրենց ենթակա գյուղացիների նկատմամբ, ըստ նրա, ասորի գյուղացին ատում էր իր տերերին և միաժամանակ սարսափում նրանցից։ Ուսումնասիրելով Իրանի աշխատավորության վիճակը, գործող հարկային սիստեմն ու տուրքերի չափը, Պերկինսը գալիս է այն եզրակացության, որ մահմեդական և քրիստոնյա գյուղացիները համարյա միատեսակ շահագործման էին ենթարկվում կալվածատերերի և խաների կողմից։ Պերկինսը միաժամանակ հիշատակում է, որ քրիստոնյաները պարտավոր էին որպես ոչ մուսուլման տալ հավելյալ մի հարկ ևս։ Պերկինսը, իհարկե, իր եզրակացություններին հանգում է միայն օրինական գանձումներից ելնելով, բայց չպիտի մոռանալ, որ վարչական մարմինները անհամեմատ ավելի ծանր շահագործման էին ենթարկում քրիստոնյա ռայաթներին։

Նա երկրի քայքայված տնտեսության պատճառները նույնպես բացատրում է ճիշտ, նշելով, որ դա նեխված հասուրակարգի, շահագործման և թալանի արդյունք էր։

Հյուսիսարևմտյան Իրանում բնակվող ասորիների դրության ուսումնասիրումը արևմտաեվրոպական տերությունները շարունակեցին նաև XIX դ. վերջերին։ Ուշագրավ է հատկապես անգլիացի

---

[51] *Rawlinson*, Notes on a Journey from Tabriz through Persian Kurdistan, to the Ruins of Takhti-Soleiman, 1914.

[52] *J. Perkins*, A residence of eight years in Persia..., New-York, 1843.

Բիշոփի երկու հատորանոց աշխատությունը, որ լույս տեսավ 1891 թ.[53]։ Բիշոփը Իրանում է եղել 1890 թ.։ Նա իր գրքում որոշ տեղ է տալիս բախտիարի ցեղերին և նկարագրում նրանց չարքաշ դրությունը, փաստեր հաղորդում Հարավային Իրանի արաբական շրջանների հողային հարաբերությունների մասին, չնայած որ ոչ միշտ է, որ նա կարողանում է տալ իրերի իսկական վիճակը։ Սակայն ավելի արժեքավոր են ասորի գյուղացիների և նրանց մուսուլման կալվածատերերի փոխհարաբերությունները բացահայտող Բիշոփի մանրամասն հաղորդումները։ Բազմաթիվ փաստերի հիման վրա նա հանգում է այն եզրակացության, որ երկրում իշխող հատարակարգի պայմաններում գյուղացիական մասսաները, անկախ նրանց ազգային ու կրոնական պատկանելությունից, տառապում էին հավասարապես։

Բիշոփը այն փոքրաթիվ հեղինակներից է, որ տվյալներ է հաղորդում նաև գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի կիրառման, գյուղատնտեսական բանվորների օրավարձի չափերի մասին և այլն։

Արևմտաեվրոպական «ճանապարհորդներին» հետաքրքրել է նաև դեռևս XIX դ. սկզբներին իրանական տերիտորիայում գտնվող անդրկովկասյան ժողովուրդների դրությունը։ Հայտնի է այն նվաճողական մտադրությունները, որ արևմտաեվրոպական պետությունները ունեին Անդրկովկասի նկատմամբ և այն դերը, որ նրանք կատարում էին ռուս-պարսկական երկու պատերազմների ժամանակ։ Միանգամայն հասկանալի է, որ արևմտաեվրոպական տերությունների ներկայացուցիչներին հետաքրքրում էր Անդրկովկասյան երկրներում տիրող դրությունը՝ պարսկական տիրապետության տակ և դրա հետ կապված բազմաթիվ այլ հարցեր։

Այդ տարիներին Անդրկովկասյան երկրներում եղած և այդ վայրերի քաղաքական, տնտեսական վիճակը մոտիկից ուսումնասիրած հեղինակներից կարելի է թվարկել մի քանիսին։

Անգլիացի Քեր Պորթերը շրջել է Հայաստանում, Վրաստանում ու Պարսկաստանում և 1821 թ. հրատարակել իր օրագիրը[54]։ Ուղևորության ճանապարհի վրա գտնվող գյուղերում նա հետաքրքրվել է հողի վարձակալման եղանակների, տարբեր հարկերի և տուրքերի չափերի մասին և այդ ամենը գրի առել։ Սակայն հեղինակին հատկապես հետաքրքրել է այն, որ սահմանամերձ այդ նահանգ-

---

53 *I. Bishop*, Journeys in Persia and Kurdistan, London, 1891.

54 *R. Ker Porter*. Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, in two volumes, London, 1821.

ների սարդարներն ու խաները սահմանները պաշտպանելու ռազմական ծախսերը հոգալու համար ոչ միայն ազատված էին իրենց նահանգի հարկը պետական գանձարան մուծելուց, այլև բուն Իրանում ունեին ընդարձակ հողեր, որոնց եկամուտները նույնպես յուրացնում էին։

Արևմտաեվրոպական ուսումնասիրողների հետապնդած նպատակները ավելի ցայտուն երևում են Մաքդոնալդ Քիննեյրի գրքում[55]։ Հեղինակը նկարագրելով գյուղացու չարքաշ վիճակը, հատկապես հյուսիսարևմտյան շրջաններում, որոնց շարքում նա դասում է Սրևանի, Ղարարաղի, Ղարադաղի և այլ նահանգները, հանդում է այն եզրակացության, որ բնակչության մեծ մասը բավականին աղքատ էր և իր կյանքի բարելավման հուսով էր, որ ողջունում էր ռուսների մոտեցումը։

Հայաստանի, Փոքր Ասիայի և Պարսկաստանի մասին հետաքրքիր փաստեր է բերում նաև անգլիական դեսպան Գոր Օզլիի քարտուղար ժակ Մորիեն՝ իր «Երկրորդ ճանապարհորդություն Պարսկաստանում, Հայաստանում և Փոքր Ասիայում 1810 թ. մինչև 1816 թ.»[56] երկհատորյակում։ Պարսկական տիրապետության տակ գտնվող երկրամասերի գյուղացիության դաժան շահագործման մասին խոսելով, Մորիեն անդրադառնում է «Սուրսաթ» կոչվող հարկաձևին։ Նա նշում է, որ երբ իրենք հրաժարվեցին գյուղացիներից սուրսաթի անվան տակ ձրի մթերք պահանջել և առաջարկեցին մթերքը գնել դրամով, ապա գյուղացիները դրան էլ չհամաձայնվեցին, որովհետև եթե խանը տեղեկանա նրանց մոտ գտնվող դրամի մասին, ավելի մեծ հարկեր կպահանջի։

Մենք թվարկեցինք XIX դարի արևմտագերմանական հեղինակների մի քանի կարևոր աշխատությունները միայն։ Սակայն մեզ հետաքրքրող թեմայի նյութերի աղբյուրները դրանցով չեն սպառվում։ Առանձին հարցերի մասին հետաքրքիր նյութերի կարելի է հանդիպել նաև անգլիացի Իսթվիկի, Վիլզի, Հութում Շինդլերի և ֆրանսիացի Բինդերի ու ուրիշների գրքերում[57]։

---

[55] *M. Kinneir*, A Geographical memoir of the Persian Empire, London, 1813.

[56] *J. Morrier*, Second voyage en Perse, en Armenie et dans l'Asie Mineure fait de 1810 a 1816, Paris, 1818.

[57] *E. Eastwick*, Journal of a diplomat's three years residence in Persia London, 1864. *C. Willis*, Persia as it is, London, 1886. *A. Houtum Schindler*, Eastern Persian Irak, 1896. *Binder*, Au Kurdistan, Paris, 1887.

Արևմտաեվրոպական ժամանակակից հեղինակները նույնպես այս կամ այն չափով անդրադարձել են XIX դ. Իրանի ագրարային հարաբերություններին, դրանցից պետք է հիշել Աննա Լամբտոնին[58],

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նա եղել է Իրանում, պաշտոնավարել Թեհրանի անգլիական դեսպանատանը։ Նա մոտիկից ուսումնասիրել է Իրանի ագրարային հարաբերությունները, շրջագայել է բազմաթիվ գյուղերում և տեղում հավաքել անհրաժեշտ նյութեր։ Աշխատությունը գլխավորապես վերաբերում է ժամանակակից Իրանի ագրարային հարաբերություններին. բայց դրքի առաջին մասում նա անդրադարձել է նաև նախորդ ժամանակաշրջաններին, այդ թվում և XIX դ. պատմությանը, որին նա հատկացրել է հատուկ գլուխ։ Այստեղ արժեքավորը այն է, որ հեղինակը իրանական արխիվներից, հատկապես ֆինանսների մինիստրության արխիվներից և մեջլիսի գրադարանից օգտագործել է գեռևս չհրապարակված փաստաթղթեր, որոնք նպաստել են հողատիրության հետ կապված մի շարք հարցերի լուսաբանմանը։ Այդ փաստաթղթերը զեկուցումների ձևով են կազմված, որոնք վերաբերում են առանձին նահանգների հողատիրության և հողօգտագործման վիճակին, հողատիրության ձևերին, նրանց տոկոսային հարաբերություններին, հողի վարձակալման եղանակներին և այլն։

* * *

Սովետական պատմաբանները, հենվելով մարքսիզմի կլասիկների ցուցումների վրա, իրենց աշխատություններում նշում են XIX դ. Իրանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի երեք կարևոր տարրերը, դիտելով դրանք փոխադարձ կապի ու կախման մեջ։ Դրանք են՝ հողի և ջրի նկատմամբ ֆեոդալական իրավունքը արտահայտող պետական սեփականությունը, մասնավոր ֆեոդալական տիրությունը՝ պետական գերագույն սեփականության ներքո, և հողատիրական համայնքը, նրան հատուկ գյուղացիական ժառանգական հողատիրությամբ և հողօգտագործմամբ, որպես ֆեոդալական արևելյան բռնապետության հիմք։

Անդրկովկասի երկրների ֆեոդալական հարաբերությունների լուսաբանմանն է նվիրված սովետական ականավոր գիտնական Պետրուշևսկու աշխատությունը[59]։ Ճիշտ է ուսումնասիրությունը

---

58 *A. Lambton*, Landlord and Peasant in Persia, London, 1953.

59 *И. Петрушевский*, Очерк изучения феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1948.

վերաբերում է XVI և հետագա դարերի հողային հարաբերություններին, սակայն հեղինակը այդ հարաբերությունների պատմությունը հասցնում է մինչև XIX դ. սկզբները։ Աշխատության մեջ ուսումնասիրված են Իրանի հյուսիսարևմտյան ծայրամասերի, մասնավորապես Ատրպատականի և Հայաստանի հողատիրության ձևերը, հարկային սիստեմը և բազմաթիվ այլ հարցեր, որոնք շատ դեպքերում ընդհանուր էին ամբողջ Իրանի համար։ Պետրուշևսկին սովետական պատմագրության մեջ առաջիններից էր, որ ճշգրտեց և մեկնեց հողային հարաբերություններին վերաբերող բազմաթիվ տերմիններ, ինչպիսիք էին՝ օրինակ, թիուլը կամ մուլքը և այլն։ Հատկապես մուլք հասկացությունը հեղինակը քննում է իր զարգացման ամբողջ պատմության ընթացքում և այդպիսով փաստորեն տալիս հողի մասնավոր սեփականության պատմությունը, նրա սաղմնավորումը, առաջացումը և հետագա զարգացումը Իրանի ֆեոդալական տնտեսության պայմաններում։ Հատկապես անհրաժեշտ է շեշտել, որ այդ դարերի Իրանի հյուսիսարևմտյան ծայրամասերում գոյություն ունեցող ֆեոդալական հողատիրության տարբեր կատեգորիաների, հարկերի ձևերի և ընդհանրապես հողօգտագործման եղանակների բնութագիրը տալիս, հեղինակը այնպիսի եզրակացությունների է հանգում, որոնք մեծապես նպաստում են այդ երկրամասերի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակի պարզաբանմանը։ Պետրուշևսկին միաժամանակ բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ արդեն XIX դ. առաջին կեսին տեղի էր ունեցել իրանական գյուղացիության մեծամասնության ամրացումը հողին և նրա այսպես ասած «ազատության» հանգամանքը արդեն կորցրել էր իր բովանդակությունը։ Ճիշտ է դեռևս այդ ժամանակ չէր ավարտվել գյուղացիական համայնքների քայքայումը, սակայն նրանց մեծ մասը բավականին ծանր վիճակում էր գտնվում, քանի որ նրանք արդեն ֆեոդալական կախման մեջ էին պետությունից, ռազմական վերնախավից և ֆեոդալական այլ ինստիտուտներից։ Պետրուշևսկու աշխատությունը Իրանի հյուսիսարևմտյան ծայրամասերի հետևաբար և որոշ դեպքերում ամբողջ Իրանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի առանձին հարցերի լուսաբանման տեսակետից շատ արժեքավոր մի ուսումնասիրություն է։

XIX դ. վերջին և XX դ. սկզբներին Իրանում գոյություն ունեցող հողատիրության և հողօգտագործման ձևերին է նվիրված ադրբեջանական լեզվով 1964 թ. Բաքվում հրատարակված Շ. Թա-

ղիևայի աշխատությունը»։ Հեղինակը իր ուսումնասիրությունը կատարել է հարուստ փաստական նյութի հիման վրա, օգտագործել բազմաթիվ աղբյուրներ ու արխիվային նյութեր և հանգել է ճիշտ եզրակացություններին։ Առանձին գլուխներ են հատկացվել XIX դ. վերջի և XX դ. սկզբների հողային սեփականության ձևերին և հողօգտագործման եղանակներին։ Չնայած որ իր բովանդակությամբ սույն աշխատությունը Իրանի պատմության XIX դ. վերջին և XX դ. սկզբներին է վերաբերում, սակայն պարունակում է հարուստ նյութ ագրարային այն հարաբերությունների մասին, որոնք ձևավորվում էին XIX դ. սկզբներից սկսած։ Հատկապես արժեքավոր են Թաղիևայի բերած փաստերը Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցման կամ, ինչպես հեղինակն է ասում, «կապիտալիզմի էլեմենտների» մասին։ Այդ հարցի հետ կապված, հեղինակը անդրադառնում է նաև գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի օգտագործման հարցին, նշելով, որ եթե վիճակագրական տվյալների պակասի պատճառով հնարավոր չէ պարզել դրա տարածումը XIX դ. վերջին, սակայն արդեն XX դ. սկզբների մասին փաստեր կան, որոնք ցույց են տալիս, որ որոշ կալվածատիրական տնտեսություններում օգտագործվում էին վարձու աշխատանքը։ Հեղինակը ցույց է տալիս, որ XX դ. սկզբներին արբաբի հողատիրությունը արդեն դարձել էր հողատիրության հիմնական ձև և արդեն հանդես էին գալիս կապիտալիստական տիպի տնտեսություններ։ Այդ բոլորից էլ բխում էր՝ գյուղացիության շահագործման ուժեղացման փաստը, գյուղացիության մասսայական հեռացումը դյուղից, նրա շերտավորումը, գյուղացիության դասակարգային զարթոնքը հատկապես 1905—11 թթ. հեղափոխության տարիներին և այլն։

Սովետահայ հեղինակները Իրանի XIX դ. սոցիալ-տնտեսական դրությունը կամ նրա ագրարային հարաբերությունները առանձին ուսումնասիրման հարց չեն դարձել, սակայն նրանք ուսումնասիրել են Հայաստանում գոյություն ունեցող սոցիալ-տընտեսական ընդհանուր դրությունը։ Եվ քանի որ XIX դ. առաջին տասնամյակներին Անդրկովկասի մի մասը դեռևս գտնվում էր պարսկական տիրապետության տակ և այնտեղ իշխող հողային հարաբերությունները Ռուսաստանին միանալուց հետո էլ դեռ որոշ

---

[60] *Ш. Тагыјева*, XIX әсрин сону вә XX әсрин әввәлләриндә Иранда торпаг муллкијјәти формалары вә торпагдан истифадә гајдалары, Бакы, 1964.

ժամանակ շարունակում էին գոյություն ունենալ, ուստի այդ աշխատությունները որոշակի նյութ կարող են տալ նաև Իրանը ուսումնասիրողներին։ Անհրաժեշտ է, սակայն, անել հետևյալ վերապահությունը։ Անդրկովկասյան երկրների տվյալ ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների այս կամ այն կողմը լուսաբանող փաստերը ոչ բոլոր դեպքերում կարող են օգտակար լինել Իրանում իշխող ագրարային հարաբերությունների ուսումնասիրման համար։ Ինչպես իրավացիորեն նշում է Խ. Ավդալբեկյանը «...Արևելյան Հայաստանում կայսերական Ռուսաստանի ձեռք բերած ժառանգությունը միատարր չի եղել։ Այստեղ իրենց բաժինը և ազդեցությունն են ունեցել վրացական, պարսկական և թուրքական պետությունները։ Սրանցից ամեն մեկը հողատիրության ու հողօգտագործման ուրույն կարգեր են ունեցել։ Պատմական կարևորագույն այս փաստը աչքի առաջ ունենալով՝ Արևելյան Հայաստանի մինչցարական ժամանակաշրջանը, հատկապես XIX դ. սկիզբը, չպետք է պատկերացվի որպես պարսկական ազդեցության միջավայր, իսկ Արևելյան Հայաստանում մնացած ամեն ինչը՝ որպես պարսկական կարգերից անցած ժառանգություն։

Իրականում ..... հողատիրության ու հողօգտագործման բնագավառում մենք նույնություն ու նմանություն չենք տեսնում Պարսկաստանից, վրաց թագավորությունից և թուրքիայից միացված հայկական ստերիտորիաներում...»[61]։

Հայ հեղինակների ուսումնասիրություններից կարելի է նշել Ա. Եսայանի «Մուլքադարական իրավունքը Հայաստանում»[62], Մ. Ադոնցի «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում»[63], Հ. Թումանյանի «Հայաստանի տնտեսական զարգացումը»[64], Ս. Մարկոսյանի «Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում»[65], և Խ. Ավդալբեկյանի «Հողային հարցը Արևելյան Հայաստանում 1801—1917 թթ.»։

Վերոհիշյալ ուսումնասիրությունները, հատկապես վերջին երկուսը, կատարվել են Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական

---

61 Խ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Երևան, 1959. էջ 6։

62 *А. Есаян,* Мулькадарское право в Армении, Ереван, 1948.

63 *М. Адонц,* Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957.

64 *О. Туманян,* Экономическое развитие Армении, Ереван, 1954.

65 Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում. Երևան, 1959։

արխիվի տարբեր ֆոնդերում պահպանված հարուստ փաստաթղթերի հիման վրա, փաստաթղթեր, որոնք այդպիսով դրվել են գիտական շրջանառության մեջ և անշուշտ արժանահավատ աղբյուր կարող են հանդիսանալ ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլև որոշ դեպքերում ամբողջ Իրանի ագրարային հարաբերությունները ուսումնասիրելու համար։

Սովետահայ ուսումնասիրողներին հետաքրքրել են հատկապես, թե Անդրկովկասը Ռուսաստանին միանալուց հետո հողատիրության նախկին կատեգորիաներից և հողօգտագործման ձևերից որո՞նք շարունակեցին գոյություն ունենալ, ի՞նչ փոփոխություններով և ի՞նչ նպատակով։ Խ. Ավդալբեկյանը գրում է. «...Արևելյան Հայաստանում ցարական կառավարությունը ոչ միայն պահպանեց, այլև, ի վնաս ժողովրդական զանգվածների և հօգուտ արտոնյալ դասի՝ հիմնականում խորացրեց և ծավալեց եղած հողատիրական հին կարգերը» (էջ 29)։ Այս հանգամանքը շեշտելուց հետո հեղինակը հանգում է նաև երկրորդ եզրակացության, որ «ցարական շրջաններն ու պաշտոնյաները տեսականորեն ժխտել են հողի սեփականության իրավունքի գոյությունը մահմեդական պետություններից (Պարսկաստան և Թուրքիա) նվաճած այս երկրամասերում։ Իրականում այդ իրավունքը ճանաչել և օրինականացվել է ցարիզմի կողմից» (էջ 29)։ Այնուհետև, հեղինակը նշում է, որ մինչև այժմ էլ դեռ պարզված չէ, թե պարսկական տիրապետության վերջին շրջանում գոյություն ունեցե՞լ է արդյոք հողի ֆեոդալական սեփականություն, և եթե եղել է, ապա այն զարգացման ինչ աստիճանի վրա է գտնվել։

Հենց այս հարցը պարզելու նպատակով է, որ Ս. Մարկոսյանը, ինչպես ինքն է նշում, իր ուսումնասիրությունները կատարել է երեք ուղղությամբ՝ հողային հարաբերությունների, գյուղացիության իրավական դրության և գյուղացիության տնտեսական դրության՝ կապված շահագործման աստիճանի հետ։ Հ. Թումանյանը Երևանի խանության մեջ երեք տիպի հողատիրություն է նկատել և մանրամասն պարզաբանել Սարդարի կողմից բաժանված խանության գյուղերի չորս կատեգորիաները, բահրեքարային, յարիքարային, ռանջբարային և կապալով տված գյուղերը։

Մեր ուսումնասիրողները մանրամասն վերլուծել են ֆեոդալական հողատիրությունը Արևելյան Հայաստանում, փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտել թիուլային հողատիրության էությունը, մուլքադարության բովանդակությունը, աղայական իրավունքը և յուրաքանչյուրին տվել սպառիչ պատասխան։

Հատկապես ուսումնասիրման առարկա է դարձել մուլքադարությունը։ Ա. Եսայանը իր աշխատության՝ «Մուլքադարային իրավունքը Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին» գլխում մանրամասն վերլուծել է մասնավոր հողատիրության իրավունքի հարցը ընդհանրապես մուսուլմանական Արևելքում, մասնավորապես Իրանի տիրապետության տակ գտնվող Երևանի խանությունում։ Ուշադրության արժանի է հեղինակի այն բացատրությունը, որ մուլքադարային և թիուլային հողատիրությունը չնայած հանդիսանում էին խոշոր ֆեոդալական հողատիրության ձևեր և գյուղացիության ֆեոդալական շահագործման եղանակներ, սակայն ունեին տարբերություններ, ինչպես հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքի բովանդակության, այնպես էլ սեփականատիրական այդ ձևերի առաջացման աղբյուրների տեսակետից։ Կարևոր է նաև հեղինակի այն եզրակացությունը, որ մուլքադարությունը որպես ֆեոդալական խոշոր հողատիրության ձև Արևելքում ուներ մի շարք ընդհանուր և միաժամանակ տարբերիչ գծեր Արևմուտքում, ինչպես նաև Ռուսաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հողատիրությունից։

Հայ հեղինակների այն եզրակացությունը, որ Ռուսաստանին միացվելուց առաջ ֆեոդալական հողատիրության բուն ինստիտուտը Արևելյան Հայաստանում մուլքադարությունն էր, չնայած դիրքով, հասույթների մեծությամբ, արտոնություններով թիուլատեր մուլքադարներն առաջին տեղն էին գրավում, գալիս է ապացուցելու, որ Իրանի հյուսիսարևմտյան շրջանների ագրարային հարաբերությունները, շնորհիվ մի շարք հանգամանքների, ավելի զարգացած են եղել, քան բուն Իրանում, քանի որ, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, մուլքադարությունը, որպես մասնավոր հողատիրության գերիշխող ձև, Իրանում լայն տարածում գտավ միայն XIX դ. երկրորդ կեսին։

Г. М. ЕГАНЯН

ИСТОРИОГРАФИЯ АГРАРНЫХ ОТНОШЕНИИ В ИРАНЕ В XIX в.

Резюме

Труды иранских историков XIX в. содержат незначительный фактический материал для изучения социально-экономического положения Йрана в XIX веке. Сохранились лишь официальные сообщения, содержащие описания поли-

тических событий и весьма скудные сведения о социальном положении в стране. Только в XX в., и особенно после второй мировой войны, ряд иранских авторов исследовали различные вопросы внутренней жизни страны и опубликовали большой фактический материал, освещающий социально-экономическое положение Ирана в XIX в. и, в частности, аграрные отношения.

Дореволюционная русская историография дает богатый материал об аграрных отношениях в Иране в XIX в. После завершения присоединения Закавказья к России в 1828 г. унаследованные со времен персидского владычества в Закавказье земельные и другие отношения не могли измениться сразу. Для решения целого ряда экономических и политических проблем в присоединившихся к России странах надо было изучить существующее там социально-экономическое положение. Этим и объясняется тот факт, что появление ряда статистических обозрений и экономических работ обобщающего характера относится главным образом к 30—40 гг. Несмотря на то, что опубликованные в XIX в. работы были написаны, в основном, с позиций защиты интересов царского самодержавия, они содержат огромный фактический материал, хотя и отличаются определенными методологическими недостатками, типичными для формировавшейся буржуазной историографии и уровня развития исторических наук того времени.

Обширные сведения о социально-экономическом положении и земельных отношениях в южных, юго-восточных и юго-западных провинциях Ирана приведены в трудах и западноевропейских авторов, особенно английских и французских. Многие западноевропейские официальные представители, военные и дипломатические деятели, члены различных миссий, миссионеры и путешественники, побывавшие в различных провинциях и малоизученных округах Ирана, собрали богатейший материал и опубликовали ряд работ, в которых нашли отражение и колониальные цели западноевропейских государств.

Ценные сведения об аграрных отношениях в Иране и феодальных отношениях в Закавказье в XIX в. содержатся в работах советских историков. В этих трудах исследованы формы землевладения, налоговая система и многие другие вопросы, связанные с аграрными отношениями в северо-западных районах тогдашнего Ирана, характерные, в основном, и для всего Ирана.